ԳԱԳԻԿ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ

# ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆԻ ԹԱԳԱԴՐՈՒՄԸ

*Սիրով նվիրում եմ սփյուռքահայ բոլոր այն երեխաներին, որոնք, իմ հարազատ երեխաների նման, կարոտում են Հայաստանը ու մեր քաղաքամայր Երևանը և որոնց մանկական աչքերում միշտ Մասիսն է տեսիլվում...*



Երևան
Yerevan
2011
ԷԴԻԹ ՓՐԻՆՏ
EDIT PRINT
Publishing House

# ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Գագիկ Թամրազյանի «Հայոց աշխարհի քաղաքները» գրքույկը մի յուրօրինակ ձոն է մեր ամենահինների աշխարհներին, զոհվածց՝ հրա յուրաքանչյուր քաղաքին։

Հայոց Աշխարհ մի մեծ տուն քաղ է պատմվածքում և որոշում քաղաքային աշխարհի պատմելից ամենատարածաշրջանային, բայց դժվարանում է կողմնորոշվել՝ թե ում։ Այսօրից նկարները նկարագրվել լսում է առաջարկում։ Այդպես, չկամենալով մնացածից նրանցից որևէ մեկին, նրա գտնում է՝ խմբագրվել, որ պատմվի իրենց ընկերոջ խոսքից արժանավորին։

Եվ այս քաղաքացիական համար պատկերացում չունի էլ ծանոթացվում է ազատամտածողությունը, որպես յուրաքանչյուր պատմ ներկայացնում է յուրովի՝ ընդգծելով իր ուրույն տեղը հայոց քաղաքակրթության աշխարհներում։

Ծովով են գտնվում հայոց պատմերը, որի ընթացքում յուրաքանչյուրը նշում է իր արժանիքները, խմաստն ու կարևորությունը։ Ի վերջո, նրանք գալիս են միջոցի համաձայնության և արդյունք վճիռ են կայացնում. բոլորն էլ արժանի են բաղդատի առաջ բազմը կոխում, քանի որ իրենք առանց մեկը մյուսի չեն կարող գոյատևել, և բոլորը մեկի բազմության կենտրոնի հայոց հոգևոր աշխարհը։

Եվ հայոց թագավորն ու քաղաքներն որոշում են քաղաքային բոլոր զրույցներին, քանի որ բոլորն էլ շատ լավն են՝ գեղեցիկ ու մեծ, պատմական ու սուրբ, քաղաքակիրթ ու ընդհանուր վայելչությամբ ու վեհությամբ...

Գեղեցիկ ավարտ ունի գրքույկը։ Հայոց Աշխարհ բոլոր զավակների իր պատմության կանչում է հրավիրում։ Եվ խնջույքը բոլորի ներկայությամբ է լինում՝ նրանք յոթ օր, յոթ գիշեր քեֆ են անում և պարախաղում։ Դրանից հետո միասին պարախաղում են երգերով ու երգերը։ Առավոտ էլ վերջից նայում է ու հիանում։

«Հայոց աշխարհի քաղաքները» գրքույկը հեղինակի առաջին գիրքն է։

GAGIK BUNIATYAN

# CORONATION OF THE ARMENIAN ALPHABET





Օրերից մի օր Արքան մեր Հայոց,
Հյուր կանչեց իր մոտ տառերին հայոց,
Մեծ խնջույք արեց, հարգեց ու պատվեց,
Խնջույքի վերջում նա ոտքի կանգնեց,
Տառերին հայոց մեծ սիրով դիմեց.
«Տառեր դուք հայոց՝ սուրբ մեսրոպատառ,
Արել եք սիրտս դուք պայծառ-պայծառ,
Սիրում եմ ես ձեզ ամեն ինչից վեր,
Ուզում եմ ձեզ տալ մի շատ թանկ նվեր»:
Ասաց, որ մի մեծ թագ է պատվիրել,
Տառերից մեկին կուզի թագադրել,
Սակայն չգիտի ով է արժանի,
Ո՞ր տառը պետք է թագը այդ կրի:
Չգիտեր Արքան, թե ինչպես վարվեր,
Որ ոչ մեկին էլ չնեղացներ:
«Ա»-ին տար, «Բ»-ին, թե՞ «Գ»-ին, արդյոք,
Երկար մտածեց թագավորն հայոց,

Չկարողացավ գտնել ելք կամ միջոց,
Ու խնդրեց Արքան տառերին հայոց,
Որ իրենք գտնեն, թե ով է արժան
Կրելու թագն այն սուրբ ու պատվարժան:
Գիտեր բարեպաշտ Արքան մեր Հայոց,
Թե ինչ հզոր են տառերը հայոց,
Գիտեր, որ նրանք զորեղ են այնքան,
Որ գիտեն անցյալը, ներկան, ապագան:
Աստծո օրհնությամբ հայոց տառերը
Գիտեն պատմական բոլոր անցքերը,
Մեսրոպ Մաշտոցից մինչև մեր օրեր
Ու էլի գալիք անհամար դարեր:
Այսպես խոսելով Արքան հաղթանդամ
Գրկեց տառերին կրկին մեկ անգամ,
Յոթ օր, յոթ գիշեր տվեց ժամանակ,
Որ գնան մի սուրբ վայրում հավաքվեն,
Իրենք որոշեն, թե ում թագադրեն:

Գնացին բոլոր տառերը գլխիկոր,
Նշանակեցին ժողովին տեղ, օր:
Եվ ահա եկավ ժամը հատկացված,
Տառերը եկան դաշտը՝ զարդարված,
Բոլոր տառերը ճիչով, աղմուկով
Ժողովատեղին հասան սուրբ օրով:
Բոլորն էլ կարծես խոսքները մեկ արած
Մտածում էին, որ իրենց արած
Գործն է արժանի թագին, անկասկած,
Որ պետք է կրի թագը Արքայի,





Պարծանքը լինի հայ ժողովրդի:
Ամեն տառ իր հետ բերեց քառյակներ,
Սուրբ մագաղաթներ, գունեղ դրոշներ:
Ամեն մեկն արդեն յոթ օր, յոթ գիշեր
Սրազ էր տեսել ու թագը կրել,
Իրեն Արքայի պալատում տեսել,
Ու գահի վրա գեղեցիկ նստել:

Մասիսի փեշին, Արաքսի ափին
Տառերը՝ նստած ծառերի շուքին,
Խնջույք արեցին, շուրջպար բռնեցին,
Երգեր երգեցին, ճառեր ասացին,
Մեսրոպ Մաշտոցին փառաբանեցին,
Հայ ժողովրդին մաղթանքներ արին:
Այսպես տառերը՝ ոգևորվելով,
Առաջին խոսքը «Ա»-ին տվեցին:



«Ա»- տառը շուքով ժողովը բացեց,
Բոլորին օրհնեց, շնորհավորեց,
Դեպի Արարատ հայացքը հառեց,
Արաքսի նման արտասուք թափեց
Ու ասելիքն  իր այսպես սկսեց.
«Քույրեր, եղբայրներ, իմ հայոց տառեր,
Բոլորդ այստեղ բարով եք եկել՝
Մեր թագավորի կամքը կատարել,
Հուսով եմ, որ դուք լավ եք մտածել
Ու այս սուրբ վայրը անարգելք հասել:
Բոլորդ էլ, անշուշտ, փառքի եք արժան,
Անցել եք երկար ճանապարհի դաժան,
Թափել եք արյուն, արցունք անսահման,
Հայի վերքերին եղել եք դարման:
Այսօր բոլորիս առիթ կտրվի,
Որ ամեն մեկը իրեն ներկայացնի,
Հավաքվածներիս սիրտը գոհացնի
Ու մեր Արքայի վեհ գահին նստի:
Շնորհակալ եմ ու գոհ ձեզանից,
Որ խոսքը այսօր սկսել եք ինձնից:
Հիմա թույլ տվեք ինձանից ասեմ,
Մի երկու խոսքով իմ մասին պատմեմ:
Ես երկար-բարակ չեմ էլ մտածել
Ու հազար ու մի պատճառներ գտել,
Որ ես եմ միայն թագին արժանի,
Ու թագն իմ գլխին տեղին կլինի:
Մեսրոպ Մաշտոցը իզուր չէ, որ հենց
Տառերը հայոց ինձնով սկսեց,
Որպես առաջնեկ հայոց տառերի,
Ինձ թվում է, որ դուք դեմ չեք լինի,
Որ այդ պատիվը միայն ինձ տրվի:
«Ա»-ով սկսվող, «Ա»-ով վերջացող
Կան հազարավոր բառեր կարևոր,
Կան բառեր հզոր, զորեղ, գեղեցիկ,
Բառեր կան սիրո, վշտի, բաժանման,





Կան բառեր՝ հակինթ, զմրուխտ, ադամանդ,
Բառեր կան անգին ու շատ թանկագին,
Բառեր կան տխուր, պարզ ու սիրալիր,
Շատ բառեր՝ դարման հայի վերքերին,
Բառեր կան հանց սուր՝ թշնամու սրտին:
Հայերի համար կան շատ սուրբ բառեր,
Որ ողջ աշխարհին կարող են գերել,
Ինչպես Արարատ լեռը սրբազան,
Արաքսը զուլալ, Արագածը վեհ:
Իսկ ի՞նչ կա Աստծուց ավելի զորեղ,
Աստվածշունչն էլ նրա հետ մեկտեղ:
Եվ չմոռանանք՝ արև ու աստղեր...
Այսքանից հետո մի՞թե կան հարցեր:
Ազնիվ ու արդար հայերի համար
Ես էլ կլինեմ թագավոր հարմար:

Արգիշտի արքան, քաջ Անդրանիկը
Շատ բարձր են պահել «Ա»-իս պատիվը,
Ու Աշոտ Երկաթ արքայի անվան
Տառը առաջին ընտրվեց հենց «Ա»-ն:
Բոլոր պատվավոր բառերը հայոց,
Ինձնով սկիզբ առան ու դարձան ամրոց:
Իսկ Արիստակես հռետորը մեծ,
«Ֆ» տառին շուքով մեզ մոտ հյուր բերեց,
Տառերիս վերջում նրան տեղ տվեց,
Օտար բառերի մուտքն ապահովեց:

Ծնվեց Ֆրիկը ու «Ֆ»-ով սնվեց,
Հայ ժողովրդին փառք, պարծանք բերեց,
Եվ այդ օրերին ներառվեց և «Օ»-ն,
Օրհնվեցինք և մենք, և օրրանն հայոց:
Ինձ թվում է՝ շատ արդար կլիներ,
Որ թագը Հայոց իմ գլխին լիներ»:
Այսպես նա խոսքն իր հանգիստ ավարտեց
Ու տեղը նստեց՝ ասելով «ամեն»:

